«Իսկ դու, ծերունի ընկեր, այս նամակը քեզ հասածին պէս, կը գնաս եզիդիների ցեղապետ Միր-Մասումի մօտ. դա քո հին բարեկամն է, այս պատճառով որոշեցաւ, որ դու կապես նրա հետ հարկաւորած պայմանները: «անտառը կոտորող կացինի կոթը փայտից են շինում»: Քուրդը քրդի դէմ — մի լաւ գործիք է մեր ձեռքում:

Եզիդիները, եթէ ընթերցողը յիշում է, քրդերի այն ցեղն էին, որ կրօնքով տարբեր էին իրանց մահմեդական ազգայիններից եւ միշտ հալածուած նրանցից: Այդ միակ ցեղն էր, որ հաշտ էր հայերի հետ եւ աւելի բարեկամ, թէեւ նա ունէր իր ազգի բոլոր աւազակային յատկութիւնները: Մահմեդական քրդերը համարում էին եզիդիներին հեթանոսներ եւ խիստ ատելութեամբ վարւում էին նրանց հետ: Եզիդիները ներկայացնում էին մարական ցեղի սկզբնական տիպը, մնացած իր մոգական սովորութիւններով: Կարդալով Կարօյի գրածները եզիդիների մասին, ես այժմ գիտէի ծերունի որսորդի ճանապարհորդութեան նպատակը:

Մի քանի տողեր նամակի մէջ վերաբերում էին ինձ:

«Ֆարհատի մասին անհանգիստ եմ, ես նրան թողեցի հիւանդ, չգիտեմ ինչպէ՞ս է այժմ նրա առողջութիւնը: Ի հարկէ, նրա մասին ինձ տեղեկութիւն կը տաք: Խնամեցէք այդ մանուկ վագրին, նրա մէջ շատ հարուստ, բայց դեռ չմշակուած ուժեր կան»...

Վերջին տողերը կարդալու ժամանակ արտասուքս սկսեց թափոել իմ աչքերից, ես չկարողացայ շարունակել ընթերցումը:

ԻԹ. ՄԸՀԷԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Կարօյի իսկական նպատակը դարձեալ մնում էր ինձ համար մթութեան մէջ: Ես չգիտէի՝ ի՞նչ էր կամենում անել նա. ինձ հասկանալի չէր՝ ինչո՞ւ համար նա իր ընկերներին այս կողմ եւ այն կողմ էր ուղարկում: Եւ իր՝ Կարօյի ասորոց կաթողիկոսի — այն կիսավայրենի զինորի եւ քահանայապետի — մօտ գնալը արդեօք ի՞նչ խորհուրդ ունէր: Կարօն այն մարդերից չէր, որ օդի մէջ ամրոց կառուցանէ կամ դատարկ ցնորքների ետեւից ընկնէ: Նա կը ցանէր այնտեղ, որտեղից հաստատ գիտէր, թէ հնձել կարող է: Իսկ այդ բոլոր զգուշաւոր եւ գաղտնածածուկ նախապատրաստութիւններից ի՞նչ օգուտ պէտք է քաղէր նա:

Ահա մտքէր, որոնք ինձ պաշարեցին նամակի ընթերցումից յետոյ: